

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ժր.

Վեցամսեայ . . . 7 Ժր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Ժրար

Վեցամսեայ 1. 50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման սողը
20 ամսիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ՉԻՔԵՐՇԱՔԻ ԵՒ ՇԱՐԱՔ

ՀԱՍՑԻ

Rédaction du journal

„Igravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

Գրութիւնք եւ լին
տրոսիր

ՌՈՒՍԻՈՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—*—

Երկու միլիառ ֆր. ի մեծ փոխառութեան կնքումի լուրին կը յաջորդէ Վիթթէի հրաժարման լուրը, Ռուս նախարարապետին հրաժարականը ընդունուած է շարէն:

Վիթթէ թէ և առողջական պատճառաւ գործէ, քաջութիւն հարկադրուած ըլլալը յայտնեց, բայց բուն պատճառը բոլորովին տարբեր ըլլալ կը թուի: Ոմանք կը ըսեն թէ ինք յետադիմական նոր սեղմումներ ընելու առաջարկ ներկայացուց Չարին ու մերժուեցաւ, ուրիշներ կը կարծեն գիտնալ թէ Վիթթէ ներքին գործոց նախարար Տուրնովոյի բռնակալական ընթացքին դէմ Չարին բողոքած, բայց իր բողոքը գոհացում չը գտած ըլլալուն պատճառաւ հրաժարեցաւ: Սակայն այս կարծիքներէն և ոչ մին ճիշդ ըլլալ չը թուիր մեզ մենք հաւատացած ենք թէ Վիթթէի հրաժարելուն բուն պատճառը Տուրնովի ընտրութեանց իրեն աննպաստ արդիւնքն է, որովհետեւ գրեթէ միայն ազատականները երեսփոխան ընտրուեցան, կառավարութեան անոնց դէմ հանած դժուարութեանց հակառակ հետեւեալ Տուրնովի յառաջիկայ բացումին Վիթթէ իր դէմ պիտի ունենար երեսփոխանաց չորս հինգերորդը, և այն ատեն պիտի ստիպուէր ամօթապարտ կերպով ետ քաշուիլ, ուստի լաւ համարեց քանի մը շաբաթ առաջ, աւելի պատուաւոր ձեւի մը տակ, անձնական տկարութիւնը պատճառ բռնելով, հրաժարիլ նախարարապետութենէ:

Ներքին գործոց նախարար Տուրնովոն ալ հարկադրուեցաւ հրաժարիլ, քանի որ իր դէմ ազատականներու թշնամութիւնը աւելի կը բուռն էր:

Չարը Վիթթէի և Տուրնովոյի հրաժարականները ընդունուելէ յետոյ, նոր նախարարութիւն մը

կազմելու պաշտօնը յանձնեց Մ. Կորէմքինին: Այս անձին ինչդաշտաբարի ծառայող և ինչ ուղղութեան հետեւող ըլլալը դեռ որոշ չիմացուեցաւ: Վիթթէական մեծ օրաթերթի մը թղթակցին տուած տեղեկութեանց նայելով, նոր նախարարապետը արտօնած է թղթակցին յայտարարել թէ ինք յետադիմականներու քաղաքականութեան չպիտի հետեւի, այլ իր ձգտումը պիտի ըլլայ՝ ժողովրդեան ներկայացուցիչներուն պատասխանատու՝ չափաւոր ազատական դրութիւն մը հաստատել: Կարծողներ ալ կան թէ Մ. Կորէմքին յետադիմական դրութիւնը ամրապնդելու կը հետեւի, Տուրնովի գումարումը յետաձգել տալով: Մենք չենք հաւատար այս վերջին կարծիքին, որովհետեւ այդ տեսակ քայլ մը Ռուս սաստանը նորէն արեւհեղութեանց թատերադրոյ մը կը դարձնէ, բոլոր ազատականները ու ծայրայեղ կուսակցութիւնները կառավարութեան դէմ միացնելով, ինչ որ արեւհեղութեանէ զատ նոր երկու միլիառ փոխառութեան գործն ալ կրնայ վիժեցնել և Ռուսաստանը թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս սընանկացնել:

ԱՆԳՈ-ԹՐԲԱԿԱՆ ՎԵՃԸ

—*—

Քաղաքական աշխարհի մէջ այսօրուան կարեւորագոյն խնդիրը կայանալով միշտ Անգլիոյ և Թուրքիոյ մէջ յարուցուած գլխաւորութեան վրայ, արժան կը համարիք այս մասին վերջին թանկարի առաջնորդող խմբագրականի խօսքերը համառօտելով հաղորդել:

«Անգլիո-թուրքական վեճը դէպի իր լուծումը առաջ գնաց, Անգլիոյ կառավարութիւնը որ երեք ամիս համբերեց, հարկ եղաւ որ ձայնը բարձրացնէ, և հաւանական է որ Թուրքիա իրեն եղած խիստ ազդարարութեան ալ ևս չկարողանայ ընդդիմանալ: Այնպիսի

ազդարարութիւն մը չստանալը իրմէ կախում ունէր, բայց ստանալէ յետոյ, այլ ևս կարող չէ թուրքիա անոր ականջ չկախել:

«Սըր Նիքօլա Օ'Բոնօրի տուած նօթան խիստ չափաւոր լեզու մը գործածելով կը պահանջէ դարձեալ առաջնուան պէս որ Թուրքիա զօրքերը նախ թապահէն քաշուին Ազապա դառնան, և յետոյ սահմանագիծայ խնդիրը որոշուի թուրք-բաղկապական յանձնախումբի մը ձեռք: Բայց որովհետեւ Անգլիա չէր կրնար այս միջնորդն բանը կրկնելով շարունակ բացասական պատասխան ստանալ Թուրքիայէն, ուստի իր արժանապատուութիւնը պահպանելու համար այս անգամ իր նօթով 10 օր պայմանաժամ տուաւ, որով այս նօթան վերջնագրոյ մը ձեւն ունեցաւ: Միանգամայն հրաման ըրաւ իւր Միջերկրականի նաւատորմիդին որ իսկոյն Մալթայէն ճամբայ ելնէ դէպի Բիրէա, Նաւային ցոյցեր ընելը Կ. Պօլիս մեծ սովորութեան կարգը մտած է, և այս վերջնական միջոցը, որ եւրոպական դիւանագիտութիւնը կը գործածէ, ստեպ յաջողած է իրեն: Մինչև որ այս ստիպիլ եղանակը բանեցնելու կէտը գայ, Բուռը երեք ամսէ ի վեր չընդունած առարկային վրայ խորհելու ատեն ունի խելքը գլուխը կուգայ, և կը հեռագրէ Բիւլտի փաշային որ իր մարդիկը թապահէն ետ քաշէ: Սա շատ յայտնի բան է որ ամենեւին Անգլիոյ հետ կուլ ունենալու իրեն ատենը չէ, իրաւ, Մուխթար փաշան Խուրին ըսած էր թէ՛ 80,000 զօրաց բանակ մը Թուրքիա համախմբած է Սուրիոյ մէջ, սակայն Սուրիան Արաբիայէն հեռու չէ, ուստի եթէ իրօք Թուրքերը այդչափ շատ զօրք ունին, լաւ չէ՝ որ փոխանակ Սինայեան թերակղզոյ կուշտը պահուի, եւ մէն խրկեն ու հոն օգտուէտ կերպով գործածեն առաջ ազգի դէմ, որոյ զարթնումը խիստ վտանգաւոր երևոյթ մէ Թուրքիոյ համար:

«Դիւանագիտական տեսակէտով կացութիւնը Բ. Դրան համար լաւ չէ, վասնզի ամէնքը այս միջոցիս զինքը կը յորդորեն որ զինանի, և եթէ նա օտար օգնութեանց ապաւինեցաւ, այսօր այլ ևս այնպիսի օգնութեանց ակնկալելու չէ: Այն մեծ յոյսը որ Թուրքիա միշտ կը տածէ որ օգնութիւն պիտի գտնէ, Գերմանիոյ վրայ է, սակայն Գերմանիա Սինայեան խնդրոյ մէջ ինքզինքը վրտանգի դնելու կերակ թէ բնաւ մտադիր չէ, և Մովսէս մարգարէի չափ յանդգնութիւն չունենալով՝ պիտի չուզէ լեռան գագաթը բարձրանալ և եւրոպական օրինաց տախտակները փնտռելու երթալ հոն: Արդէն գերմանական լրագիրները կը պնդեն թէ Կ. Պօլսու յետմանիոյ Դեսպան պառնտը Մառշալը Բ. Դրան ազդարարեր է թէ՛ իր ձեռքով մէջը ինկած գլխաւորութիւններէն աշխատի ինք իրեն դուրս ելնելու և Լօնտոնի մէջ նոյնպէս Գերմանիոյ դեսպան Վօլֆ-Միթերնիկ Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնեայ Սըր Էտուարտ Կրէյը ապահովեր է այս մասին: Պերլինի դահլիճին այս բռնած ուղիղ դիրքը խիստ պիտի չփոթէ Թուրքերը:

«Միւս կողմանէ թէ՛ Մ. Բոնսթան ֆրանսայի դեսպանը, և թէ Մ. Չէնովիէլ Ռուսիոյ դեսպանը, մեծ եպարքոսին բարեկամաբար խորհուրդ տուին գործերը շատ հեռուն չմղել:

«Երեւելի սէրութեանց այս միաձեւ ընթացքը թրքական ապագայ գործոց նկատմամբ օգտուէտ ըլլալու նշան մ'է: Քաղաքական, Անգլիան և Ռուսիան գրեթէ բնաւ Կոստանդնուպօլսոյ մէջ այնչափ սերտ բարեկամական կապակցութիւն ցոյց տուած չէին որչափ այսօր, եթէ այս շարունակէ այսպէս, տարակոյս չկայ որ երեքին համար ևս բեղմնաւոր գործունէութիւն մը և անգին ապահովութիւն մը պիտի յառաջ բերէ . . .

Բիրէա գացող անգլիական

նաւատորմիդը կը բաղկանայ թաւ յրազրի ծանուցածին համեմատ, 8 մեծ զրահաւորներէ, 4 զթահաւոր յաճանաւերէ և 12 թորփիլահալածներէ։ Այս նաւատորմիդը ընդհանուր հրամանատարն է Լօրտ Զարլս Պերեսֆօլտ Ամերլա, և երկրորդական հրամանատարը Ամերլա Պրիմման։

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

Փոխարքան մայիս ամսոյ մէջ Բէթերսպուրկ պիտի երթայ եւ կըսուի թէ մտադիր չէ կովկաս վերադառնալու, այլ անոր տեղը պիտի գայ զօրավար Միլլինկոն, որ Մանչուրիայի խաղախ հեծելազօրի հրամանատարն էր։

—ՏՖՊԻՍԻ Բնդհ. նահանգապետը կարգիւ է Տֆդիսի լրագիրներուն տպել եւ արտատպել զինուորական անձնուրու եւ վարչութեան վերաբերեալ գործեր ու անոնց կարգադրութիւններու մասին զաղտնի հրամանները։ Բոլորովին կարգիւ է նոյնպէս պատժական զօրախմբերու եւ անոնց հետ գտնուող վարչական անձնուրու գործողութիւնները գրել։ Այս արգելքներուն չը հնազանդող թէրթերը պիտի գոցուին եւ խմբագիրները պիտի արտաքսուին նահանգէն։

—Տֆդիսի մէջ կազմուած է «արմատական» անունով նոր կուսակցութիւն մը, որ կը հետեւի սահմանադրական-նաւկապարական կուսակցութեանն աւելի ազատական ուղղութեան։ Այս նոր կուսակցութեան թեկնածուներ պիտի ըլլայ Տֆդիսի կողմէ իշխան Ա. Մ. Երկայնաբազուկ-Արդուսեանը։

—ԳԱՆԱԿԻ նախկին ոստիկանապետ Թէմուր-բէկ Հասան-բէկովը նշանակուեցաւ Շուշի գաւառի հաշտարար միջնորդ։ Այս այն Հասանբէկովն է, որուն ոստիկանութեան օրով Գանձակը թաթարական արշաւանքի զոհ գնաց։ Ա՛լ հասկցէք . . .

—Բնկերվարականներու մէկ գաղտնի տպարանը գտնուեցաւ, ուր կը տպագրուէր զինուորներուն ուղղեալ կոչ մը, թուցիկներ եւ Ձ առւած։ Ձերբակալուած է վարացի վարժուհի մը, մասնադէմ է գրաշար մը։

Ա. ՇԻՏԱՆՆԱՆ

ՊԱՐԻՊ ԱԽՊԵՐ...

(Շար. նախորդ թիւէն)

Ե.

—Անանկ եղաւ որ կառավարութիւնը ազատ թողուց զիս . . . Եւ որովհետեւ շատ բարեկամ եղանք իրարու թէ՛ հայրենակից եւ թէ՛ բաղդակից ըլլալուն համար մեկնած պահուստ խնդրեց որ իր զեղը հանդիպէի ու իր ընտանիքին յոր մը տալիս։ Ըսաւ ինձի թէ՛ ծերունի հայր մը ունի եղիւր, որ Ռէս Մուրատ կը կոչուի, յետոյ կին մը ու մէկ հատիկ աղջիկ մը կան։

Բարսեղ Աղա ու կինն իրարու երեւոյր նայեցան ու չը գիտցան մէկէն ի մէկ ի՞նչ պատասխանեմին։ Իրենք հաւատացած էին թէ Ասլան մահուան դատապարտուած ու կախուած էր։ Մինչդեռ սարսաղ իրականութիւնը տարիններէ ետքը՝ յանկարծ կը մերկա-

ՇՈՒՇԻ ԶԱՅ ԿԱՆԱՆՑ ԴԻՍՈՒՄԸ

Շուշիի հայ կանանց կողմէ Ռուսաց կայսրուհին տրուած հեռագրին պատճէնը։

Յարակոյէ Սէյօ, նորքի կայսերական Մեծութիւն թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնային։

Մենք, հեռուոր կովկասի Գանձակի նահանգի Շուշի քաղաքի հայուհիներս, աղերսանքով դիմում ենք Ձեզ, Ամենաողորմած թագուհի, եւ, խոնարհուելով առ օրոք Ձեր, աղաչում ենք լսէք մեր վիշտը եւ Ձեր հոգեկու խօսքով դադարեցնել տաք այն անպատմելի սարսափները, որ գործում են մեր քոյրերի ու եղբայրների վրայ մեր աչքի առաջ Գահի անխուսելի ծառաները, որոնք շինելու եւ պաշտպանելու փոխարէն աւեր, կործանում ու անպատուութիւն են պատճառում Ձերդ Մեծութեան ինքնակալ Ամուսնու գաւառի հաւատարմի հպատակներին։ Մեր աղաչանքն ուղղում ենք Ձեզ, թագուհի, որովհետեւ Դուք, եւ միմայն Դուք, իբրեւ կին, ընդունակ էք ըմբռնելու մեզ հասած դժբաղդութեան բոլոր անհուն մեծութիւնը եւ ցոյց տալու մեզ Ձեր անսահման գթասրտութիւնը, հրամայելով դադարեցնել այդ դժբաղդութիւնը։ Մի տարուայ հայ-թաթարական կոտորածի արեւնայի սարսափներից յետոյ, որոնց ընթացքում մեր հայերը, եղբայրները եւ ամուսիններն իրենց կուրծքը դէմ տուած եւ արիւննոտ զոհերի գնով պաշտպանուած էին թաթարների վայրենի խուժանների դէմ իրենց քրտինքով ձեռք բերած կարողութիւնն, օղակի արուսթիւնը հայերիս օղակի պայթեց մի նոր փռանք եւս սարսափելի դժբաղդութիւն, որի հեղինակներն զէմ մեր հայերը, եղբայրներն ու ամուսինները չունին ոչ ոյժ եւ ոչ էլ հնարաւորութիւնը պաշտպանելու։ Չնայելով հայերի զարաւոր հաւատարմի հրապտակութեանը Ռուսական Գահին եւ այն անձնուէր ծառայութեանը որ ցոյց են տուել նրանք Ռուսական Պետութեանը պատեհաբար դաշտում ու քաղաքացիական ասպարէզում, նրանց դէմ յայտնի չէ ինչու այնպիսի մի հարածանք է յարուցուած, որի նմանը

նաք ու աղէտաւոր ստուեր մը կը թողուր իրենց պատուոյն ու անունին վրայ։

—Մի՛ վշտանաք . . . Աստուած ողորմած է օր մըն ալ անհկա ներման կարծանանայ, յարեց կարիպ Ախպէր՝ կեղծելով որ անոնց տրտմութիւնը կարօտէն էր։

—Յոյս կա՞յ ազատուելու . . . վրայ բերաւ Բարսեղ Աղա։

—Եթէ ողջ մնայ, գալ տարի կը ըրաջուէն՝ դատապարտութեան չըջանը . . . Միայն թէ՛ քանի որ Ասլանի Աններն ըլլալու բաղդն ունեցած էք, առանց յապաղելու անոր ծերունի հօրն ու ընտանիքին ո՛ւր բնակիւնին յայտնեցէ՛ք ինձի որ աւանդ մուսիմ, անոնց յանձնելու պարտականութիւնս կատարեմ։

—Դրամ է։

—Այո՛, մաս մը դրամ է ու մաս մըն ալ իր կնոջ ու աղջկան համար զարդեղէն նուէրներ են։ Ասլան խելացի էր. քանտարկեալներուն սուրճ կէփէր ու դրամ ալ կը շահէր։

—Բերած ստակը որքա՞ն է։

—Շատ չէ՛ . . . Երեք ոսկի հազիւ

չի յիշում մեր պատմութիւնը նոյն իսկ մահմետական պետերի տիրապետութեան ժամանակներից։ Մեր գաւառի վրայ բաց է թողուած կազակների մի թուցիկ զօրաբաժին իբր թէ հայերին ու թաթարներին հաշտեցնելու եւ նրանց միջեւ խաղաղութիւն ու կարգ հաստատելու համար։ Այդ զօրաբաժինը, որի հրամանատարն է Գնդապետ Վեփերն եւ որի գործողութիւնները, ղեկավարում են գաւառապետ Ֆրէյլիս եւ հաշտարար միջնորդ Երմուշյան, գաւառի խաղաղ հայ բնակչութեան գլխին այնպիսի սարսափներ է բերում, որոնց նկարագրութիւնը սառեցնում է մարդու արիւնը։ Մերունիների մատուցած աղուհացը չի ընդունում. զէնք խելու պատրուակով կազակները մտնում են բնակարանները, կողոպտում են բոլոր արժէքաւոր իրէղէնները, ջարդում, ոչնչացնում են գիւղացու վերջին ամանեղէնը, գիւղական հացահատիկի աղքատիկ պաշարը թափում են ցեխի մէջ ու փոխ տակ տալիս, իրենց գիւղացիներին ձեռնում են եւ ենթարկում ամենասարսափելի շարժարաններին, որոնցից յաճախ մեռնողներ են իննում, որպիսիք չեն գործում շոյն իսկ թշնամու երկրում։ Եւ ահա ի տես թաթարների ձեռքով այրուած գիւղերի եւ քաղաքների դեռ եւ ծխացող աւերակների հանդէս են գալիս նոր աւերակների կազակների շնորհիւ, եւ թաթարների ձեռքով ընկած զոհերի արիւնը դեռ չցամաքած նոր զոհեր են ընկնում կազակների ձեռքով։ Եւ այս բոլորը կատարում է նրանց իշխանաւորների աչքի առաջ։ Բայց ինչ որ ամենից աւելի սարսափելին է եւ չի կարող մինչեւ հոգու խորքը չվրդովել ամեն մի կնոջ, այդ այն է, որ պրծում է կնոջ ամենաթանկագին սրբութիւնը՝ նրա ողջախոհութիւնը. ամուսինների, եղբայրների եւ հայրերի աչքի առաջ լլկում են նրանց կանաչ քոյրերը, աղջիկները, սկսած վաթսուներեք տարեկան աղջիկները, Պղծութիւնից չի ազատուում նոյն իսկ ծննդաբեր կնոջ անկողինը։ Այսպիսի սարսափների են ենթարկուել մեր գաւառում մարտի 15-ից ի վեր հետեւեալ հայ գիւղերը՝ Թաղ, Տող, Աղոխ, Տուսի, Սոս, Ճարտար եւ այլն։ Այս պատճառով բնակիչներից շատերը, չը նայելով մեր

կըլլայ։

—Մեր անունն իրմէ՞ն լսեցիք։

—Հարկա՛ւ։

Բարսեղ Աղա չը կրցաւ հանդուրժել սիրտը բլած էր. ու սկսաւ արտասուել։

—Ի՞նչու կուլաք . . . Ի՞նչ պատահած է, հարցուց կարիպ Ախպէր։

—Ի՞նչ ըսեմ . . . յայտնելիք քան մը չէ որ . . . միմիջեց Բարսեղ Աղա՝ խըռովայոյզ ձայնով մը։ Կը տեսնեմ որ Աստուած մեր մեղքը երեսնուս կը զարնէ . . .

—Պատճա՞ռը։

—Պատճառն ա՛յն է որ Ասլանի կինն ամուսնացած է ու երկու գաւակներ ունի։

Վա՛յ . . . շատո՞նց է։

—Է՛հ, մօտաւորապէս հինգ տարի կըլլայ։

—Անոր ծերունի հայրն ո՞ւր է։

—Ան ալ օրերը ձեզի տուաւ . . .

—Իսկ աղջիկ՞ը։

—Ա՛խ, եղբայր, անոր մասին բան մը մի հարցունէք։

—Ի՞նչու . . . մեռա՞ծ է։

—Ո՛չ. բայց երեք տարի է ի վեր

յեռներում դեռ եւս տիրող ձմեռնային քառամյաններին, գտնուած են ապաստանել անտառներում եւ լեռների խորքերում։ Ահա թէ ինչու Ձերդ Մեծութիւն, մենք համարձակուած ենք զիմեւ Ձեր գթասրտութեանը եւ խնդրել մեր անպաշտպան քոյրերի ու ձմեռնային սառնամանքից անտառների մէջ կապտած նրանց մանուկների կողմից, որ հրամայէք վերջ տալ այս բոլոր անուր սարսափներին։ Ապաւնելով Ձեզ, մեր սոյն աղերսն արկանում ենք առ օրոք Ձերդ Մեծութեան, իբրեւ բոլոր հալածուածների ու վերաւորուածների գթապատ մօր։

Շուշի քաղաքի մայրերի եւ քոյրերի կողմից ընտրուածներ՝ «Մորիա Դուրսխանի» նատէստա Աւանդուհան։

Նոյն իմաստ հեռագիր մըն ալ տրուած է փոխարքայի կնոջ, որ հետեւեալ պատասխանը տուած է Շուշիի հայ կանանց։

Տիկին Մարիա Դուրսխանիին։ Ամուսնուս հրամանով ձեզ մօտ է գալիս ընդհանուր-նահանգապետը, Աստուծով ամենքդ էլ կը հանգստանաք, ծաւալի էր ինձ համար ձեր հեռագրի ընթերցումը։

«Դրաւփունի Եղիսայիս Վարանցույս»
(Ն.ՈՐ.ԴԱՐ)

ՀԱՅԵՐՍ ՁԵՆ

ՇԱՀԱԳՈՐԾԵՐ

Տէր Խմբագիր Իրաւունք պատ լըրագրոյ։

Ձեր պատ. թերթին թիւ 28 եւ ապրիլ 19 ամսաթիւին մէջ հայեալ շահագործում եւ խոշորատառ վերնագրի տակ Պապիկ կեղծ ստորագրութեամբ ֆիլիպէէն գրուած մի յօդուած կարդացի, եւ զոր դուք հրատարակած էք ի նկատի առնելով մի միայն ձեր աւեր հետ ունեցած անձնական ճանչ-ւորութիւնը, ձգելով անոր վրայ սակայն գրուածքին պատասխանատուութիւնը։

Ես ստորագրեալս, որ բնիկ Սալմաստցի եմ Խոյի մէջ մեծ հայասէր

անյայտ եղած է . . . ո՛ւր ըլլալը չը գիտցուիր։

—Տարաբաղդ երիտասարդ . . . ո՛հ, իրաւ որ աղէտալի լուր մըն է այդ ու ես չի պիտի կրնամ երկուստով մը գրեւ լուսնոր։ Ըսելէ թէ տունը կը մնայ երեսի վրայ, անանկ չէ՞։

—Ա՛խ, տունը պահանջատիրոջ ձեռքով արդէն ծախուած է։

Կարիպ Ախպէր դողդղալով հարցուց. —Անլուր աղջկան առեւանգումը ի՞նչպէս եղած է։

—Ի՞նչ գիտնամ . . . Թաւանի տարին Ձէքի պէյ անուն զինուորական մը մեր գիւղն եկաւ երկու հարիւր հոգիէ բաղկացած վաշտով մը ու պաշարումի տակ առաւ, որպէսզի արիւնհեղութիւն մը տեղի չունենար։ Ամեն մարդ անուր զողի մատնուած էր։ Երբ Ձէքի պէյ հեռացաւ, աղջիկս լալով տունս եկաւ ու ըսաւ թէ՛ «զաւակս, զաւակս» տարին։ Ի՞նչ կրնայի ընել . . . ահա՛ այսչափ միայն տեղեկութիւն մ'ունեմ . . . պատասխանեց Բարսեղ Աղա. երկուստով վերադառնալով իմ տունը։

—Այդ Ձէքի պէյը ո՞ղջ է։

—Այո՛ . . . քաղաքը կը գտնուի։

Տօք. Էքսթրեմիստներն բացած որոշումներն մէջ ալ քիչ թէ՛ շատ կրթութեամբ, չիտակել խորքին ցաւ, ցաւորի եւ չէի կրնար անտարբեր մնալ թէ քննչական կարելի է ուրանալ յայտնի հաստատութիւններ, որ արեւի պէս կը փայլին յայտարարելու տակ :

Շատ երկար պիտի ըլլայ պատասխանել ամէն մէկ կէտին այդ գրութեանը, որ սկիզբէն մինչեւ վերջը մեր մէջ սովորական դարձած խնդր մը անխմտութեամբ անշահ Փրագներու կրկնութիւնն է, թէ օտարներ այսպէս կամ այնպէս այս կամ այն պատճառով անկի տակ կը գործեն եւ երբեմն շատ ու շատ յառաջ ալ երթալով ապրանքաւորութեան ուրանալ կուզենք եւ կուրանանք ալ ազնիւ Տօքթորին նման հազուադէպ անձանց հայաստանութիւնը, որոնց շնորհիւ հազարաւոր հայ որբեր, փրկուեցան ապրեցան ու կապիւն տակաւին, կրթուեցան ու կը կրթուին ալ : Ու ճիշդ ասոր համար ալ պարտ անձին կը համարիմ զոնք ի սէր ճշմարտութեան եւ ի շահ ազգին յայտնել, որ Պ Տօքթորը քաղաքական ըրած ընտիր բանաստեղծեան մէջ երբեք չըսած թէ 8 միլիոն ֆր. հաւաքուած է, այլ 5 միլիոն մարդ. որ կընէ 6 միլիոն եւ 250 հազար ֆր. եւ այս ստակով է բացած արդարեւ ոչ միայն չորս որբանոցներ, այլ եւ անոնց կից արհեստանոցներ, հիւանդանոց ու դեղատոմս եւ այդ գրածին շահովն է անշուշտ որ տասնեակ տարիներէ ի վեր ալ կը մատակարարուին այդ վերթական ու մարդասիրական հաստատութիւններ :

Արդարեւ Պ. Էքսթրեմիստ չորս որբանոց բացած է տակաւին սարսուռի օրերին սէջ, երկուքն ի Տաճկաստան-Ուրֆայի եւ Տիգրանակերտի մէջ — երկուքն ալ ի Պարսկաստան — իրոյի ու Ուրֆայի մէջ — գերմանացի տնօրէններ իւր տնօրէններէն փերին հսկողութեան ներքեւ :

Ամեն ամիս ալ գերման լեզուաւ անոնց տեղեկագիրը կը հրատարակուի թէ քանի որբեր կան, ինչպէս է անոնց առողջական ու կրթական վիճակը եւն. եւն. :

Արդ, խղճի ամենայն հանդարտութեամբ կրնամ ըսել որ, ես ու եղբայրս, որ տարիներ իրոյի որբանոցին մէջ մնացած ենք եւ որ ատեն մեզի

հետ տակաւին ուրիշ 120 աղջիկ ու մանչ որբեր ուսում կառնէին, երբեք ըսելիք չունինք մարտութեան, առողջութեան, առատ ու օնեղարար կերակրող մանաւանդ կրթութեան մասին տարած խնամքներին : շատ լաւ կը յիշեմ թէ ինչպէս շատ փոքր պէտք եղած դեղերը եւ դարմանները կընեն որեւէ մէկին փոքրիկ հիւանդութիւն մը պատահած ատեն եւ ինչ սիրով կը գգուէին (")

Անվիճելի է. որ եթէ սուտ ըլլային այդ բաները, կրնայինք ու քաղաքական օտար ներկայացուցիչներէ (հիւպատոս, կաթոլիկ եւ ուսուցիչ) նախաները, նոյնիսկ մեր լուսաւորչականները) զոնք մին անշուշտ պիտի համարձակէր հերքել այդ տեղեկագիրները եւ կամ ցարդ օտար բերդական թերթերի մէջ հրատարակուած տեղեկութիւնները եւ իրօք եթէ ստատիստներ ու խաբարներ կան, թէնիւ անոնց երեսին ու թէնիւ տար :

Մասնաւորապէս Ուրֆայի համար կը պնդէ, որ հայ որբանոց չունի, սակայն մեծապէս կը սխալի, Ուրֆայի որբանոցին չէնք իրոյնէն երկու անգամ աւելի մեծ է եւ թերեւս գեղեցկագոնէն չորս որբանոցներէն : 2-3 ամիս այս օրբանոցին մէջ ալ միտլու բարեբաղդութիւնն ունեցած եմ ես եւ զոր տեղացիք կանուանեն Տիլկուշալ որին արդի տնօրէնուհին է օր. Մ. Աննա Ֆրիտման :

Ինչ կը կարծէ Պ. Պապիկը եթէ այս հաստատութիւններ սուտ ըլլային, ինչպէս ինք կը կարծէ, միթէ նոյն իսկ մեր մէջէն այն կողմի հայերէն մինչեւ հիմա զէմ գրողներ չպիտի ըլլային :

(*) Իրոյի որբանոցի տնօրէնուհին օր. Մ. Զառնաք. որ տեղէն անցնելով Եւրոպա ուղեւորուեցաւ : Նամակ մ'ունէր քովը Սրբազան Կաթողիկոս Հայրիկէն, որ գոհունակութիւն կը յայտնէ ընդհանրապէս գերմանացւոց, եւ մասնաւորապէս օրիորդին հայ որբերի նկատմամբ տածած խնամք ներուէն համար : Ս. Կաթողիկոս անտարակոյս իւր մարդիկներէն առած տեղեկութեանց վրայ է, որ այդպիսի գոհունակութեան գիր մը գրած է օրիորդին :

անոնք ինչ ազգի ալ պատկանին : Ու այս տիպի խոստովանութեանէն ետքը վերադարձաւ քաղաքը : Երկար հարցումիւ քովի մը պէտք չը տեսնաւ ... անմիջապէս հասկցաւ թէ Զեքի պէյի ապարանքը տաճկաց թաղին մէջ կը գտնուէ, որ պարսկապէն դուրսը, Ոստանայ ճամբուն վրայ, գեղեցիկ փողոցներով թաղ մըն էր : Իսկ մ'անգամ անոր ապարանքին առջեւէն անցաւ, պատուհաններուն նայեցաւ, որոնք կրկնափեղկերով ծածկուած էին. դուռնի մօտեցաւ, սպասեց ու նորէն կրկնեց ըրածները : Երկուքն ալ օրը մէկը չը տեսնաւ ու դուռը բնաւ չը բացուեցաւ : Հետեւեալ ատուէն, դեռ լոյսը չը ծագած, դարձեալ ապարանքին քովերը կեցաւ : Ան ատեն նշմարեց որ ծերուկ թուրք մը մօտեցաւ դուռին ու կամաց մը չլսակը քաշեց : Անոր մէկ ձեռքը թիթեղէ ճոտանք մը կար ու միւս ձեռքը՝ պզտիկ աման մը, որ չափ մըն էր : Օ՛հ, հասկցաւ որ կաթնալոծաւ մըն էր : Հետեւեալ, երբ ծերուկը դուռնէն հեռացաւ, կարիպ Ախպէր հետեւեցաւ անոր ու փտաւ ցածուկ ու կէս

Ուրմիւլ մէջ ալ կը գտնուէին հայեր, որ թերեւս այդ ամսական տեղեկագիրներ միշտ կը կարդան եւ լուր չպիտի մնային անտարակապ, եթէ արգարե իրեն ըսածին պէս տօք, Էքսթրեմիստ կը շահագործէ հայերը, մարդ մը, որ երբեք պէտք չունի հային եւ ինչի հետ խիստ շատեր կը հաւատանք, որ նա գործեց եւ կը գործէ արդարեւ միմիայն այն ջերմ ու փեմ հաւատքով թէ օգնել եղբոր քրիստոնէութեան առաջին պարտքն է եւ թէ ով որ փոքրիկներէ մէկին կընէ, նոյն իսկ անոր (Աստուծոյ) ըրած կըլլայ, ինչպէս շատ գեղեցիկ կերպով խօսեցաւ ինք այս մտքը եւ այս զգացումով ալ, խեղճ մարդը քանիցս կեանքը վրայ տալու վտանգին մէջ ալ դանդաղ է :

Ինչպէս ըսի, շատ երկար պիտի ըլլայ գրել այս նիւթին վրայ, սակայն ի նկատի ունենալով որ այսչափ ալ բաւականէ, զի ոչ ազնիւ տօքթորը եւ ոչ Պատ. Աւետարանեան պէտք ունին իմ տկար գրչին (երկուքն ալ բացակայ են այս կողմերէն,) մանաւանդ թէ քանի որ իրողութեանք կը խօսին ու կը վկայեն թէ ով աւելի կը սիրէ հայը եւ ո՛ր է ճշմարտութիւնը, ինչ կը մնայ լռել, այսչափ ալ գրեցի ցուցնելու համար թէ որչափ կը սխալին Պապիկի ներշնչով ճանշնալ իրողութիւնը, այն է ճշմարտութիւնը եւ այս ով գիտէ ինչ նկատումներով :

Ս. ԱՌԱՔԷԼԵԱՆՑ

1906 ապրիլ
Շուշա

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԵՐԸ

«Օրօր» լրագիրը կը գրէ :
«Ինչպէս ծանուցած էինք մեր ապրիլ 27 ի թուով, Բուսթէր, Վէսուկի եւ Սան-Պրանչիսկոյի արկածն ուղի օգտին Հայոց կազմակերպած բանախօսութեանց առաջինը տեղի ունեցաւ երէկ հոծ բազմութեան մը առաջը, Թրէվիզ փողոցի 14 թիւ Բրիտանիական Միութեան ընդարձակ սրահին մէջ :
Բանախօսող Տիար Ա. Ա. Թորգոմ-

եան իր ատենախօսած միջոցից ջերմապէս ծախահարուեցաւ մի քանի անգամ :

«Ստուերայութեան պատկերները լրօծէ թիւն» յորոց ոմանք այս ատանջին անգամն էր որ ի ցոյց կը դրուէին, սաստիկ շահագրգռեցին ներկայ եղող ունկնդիրները :

«Բանախօսութեան վերջ Սան-Պրանչիսկոյի քաղաքապետին համակրական հեռագիր մը ուղղուեցաւ, որմէ զատ համակրալից նամակներ եւս խրկուեցան Փրանսայի հասարակապետութեան նախագահ Մ. Ֆալէրին, իտալիոյ ներքին գործոց նախարարին եւ Ամերիկայի նախագահ Ռուզվելթին :

«Ստորագրութեանց ցուցակը բաց պիտի մնայ մինչեւ միւս բանախօսութեան փակումը, յորմէ յետոյ հաւաքուած գումարները պիտի խրկուին առ որ կը պատկանին :

«Երջանիկ ենք հաստատելու որ Հայերը իրենց կրած անթիւ թշուառութիւններով հանդերձ, ետ չմնացին իրենց համակրութեան արտայայտել տարւոյս մէջ եղած երեք մեծ ծախորդութեանց առթիւ, որոնք, ինչպէս խիստ լաւ բացատրեց բանախօսը, «իրենց յանկարծական պատահմամբ ու ըրած բազմաթիւ զոհերովը, Փրանսայի, իտալիոյ եւ Միացեալ Նահանգաց սիրտերը տխրեցուցին, եւ քաղաքակրթեալ աշխարհը սգոյ մէջ ձգեցին» :

«ԶԱՅԵՆ» ՀԱՅՐԵՆԵԱՅ

Այս մեծածաւալ շաշմարթերով յեղափոխական ջղուտ յօդուածներ, քննադատականներ եւ ազգային ու քաղաքական լուրեր կը պարունակէ : Արտասահմանի համար տարեկան բաժնիքինն է 12 ֆր. կանխիկ : Հասցէն է՝

Արմենեան Բիւլլիիլիկ քո.
Բ. Օ. Պօքս 1731, Պոպրն, Մաս-
[Ամերիկա]

Կարելի է բաժանորդագրուել նաեւ Իրաւունքի խմբագրութեան միջոցաւ :

— Զը դիմեցիք իրեն :
— Նախ որ հաստատապէս չենք գիտեր թէ անոր քովն է, յետոյ ներկայ ժամանակներուն մէջ անկարելի է :
— Ասլանի աղջիկը քանի տարու կայ :
— Տասներկու քը կանցի : Բայց հասակը բարձր է ու նմանը չէր գտնուեր Վանայ փոսին մէջ :
— Ան ատեն ի՞նչ քովը կը մնար :
— Այո՛ :
— Մայրը ամուսնացած էր, չէ՞ :
— Ժիշդ է :
Կարիպ Ախպէր հեղեղուած զսպեց ու շնորհակալութիւն մը յայտնելով պատրաստուեցաւ մեկնելու : Սակայն Բարսեղ Աղա խնդրեց որ հիւր մնայ իրեն ու օր մը ետքը մեկնի :
— Զեմ կրնար մնալ ... առարկեց Կարիպ Ախպէր, պէ՛տք է շարունակեմ ու երթամ ընտանիքս տեսնելու, որմէ բաժնուած եմ աւելի քան տասնեակու տարիներէ ի վեր : Ախ, չը գիտէ՛ք, Բարսեղ Աղա՛, որքան մտերմ եղած էր Ասլան, որուն համար քր մը յեղաձգեցի ուղեւորութիւնս : Անորաւայրը տեղ մըն է ուր տառապաղները եղայր կը դառնան իրարու,

մը փոխկած ախոռ մը :
Ծերուկը զարմանքով մը գէմ կեցող անծանօթին երեսը նայեցաւ ու հարցուց :
— Ինչ կուզես, Ախպէ՛ր :
— Բան մը չէ՛ ... ծառայ եմ, պատասխանեց Կարիպ զողջալով :
— Որո՞ւ ծառայես :
— Ո՛չ մէկուն ... ըսել կուզեմ թէ ծառայութիւն ընելու նպատակ մը ունիմ :
— Ո՛ւր :
— Այս ախոռն մէջ :
— Իմ քով :
— Այո՛ ... արդեօք կարիքն է :
— Ինչ ըսեմ, Ախպէ՛ր, մրմնջեց ծերուկը՝ շարժելով իր ալեգարդ գրուիւր : Ես ինչ կը շահիմ որ ծառայի մը պէտք ունենամ : Ամենը վեց տուն յաճախորդ գտած եմ : Դու ինչ ազգ ես :
— Բուրդ եմ :
— Անո՞նք :
— Կարիպ է :
— Աղէ՛կ ... բայց ծառայի պէտք չունիմ :

— Շատ բան չեմ ուզ'ի : Միայն հացը տալու ըլլաւ, կը գոհանամ, Աղա՛, յարեց Կարիպ Ախպէր խորունկ հառաջանքով մը : Ես անձնօթ մըն եմ այս երկրին մէջ :
Բարի ու միամիտ ծերուկը զթաղ ու պահ մը մտածելէն ետքը ըսաւ :
— Ինծի նայէ՛, Կարիպ Ախպէ՛ր, խիղճս չը ներեր որ գոհունէմ ճամբիմ քեզ : Եկուր Աստուած ինչ որ տուած է ինծի միտքին կը վայելնեք : Գիտե՛ս կաթ կ'ընել :
— Գոթաղաքար չեմ գիտեր՝ նկատել տուաւ Կարիպ :
— Ուրեմն այդ գործը վրայս կառնեմ, իսկ դուն յաճախորդներուս կաթ կը տանիս : Միայն թէ կէս օրէն ետքը կուգաս հետս որ ցոյց տամ այդ ապարանքներն, որոնց շնորհիւ կապրիմ չորս տարիներէ ի վեր : Իսկ կ'ըն մը ունիմ ... ուրիշ ոչինչ :

(Շարունակելի)



ՀԱՎԱՏՈՒՄ

ԹԻԻՐՔԻԱ

Սօֆիանան Պուգրէշէ իշար օլընաղընա պինան, ֆէյս Բրէնս ֆէրտինանտ պիր ինկիլիզ կազէթաճըսընը հուզուրա գապուլ իթմէսինտէ՝ Մաքէթոնիա մէսէլէսի պու սէնէ հալլ օլընապիլէսէք տէմիշ։ Պուկարիա Բուսիա իլէ իթիլաֆ հասըլ իթտիքտէն սօնրտ՝ ֆրանսա վէ իթալիանըն մուսվէնէթի սայէսինտէ Ալմանիա վասիթասը իլէ Մաքէթոնիա մէսէլէսի հալլ իթմէկէ չալընաճաղընը Բրէնս պէյան իթմիշ։

—Երկիրմի տէօրթ հարպ վաւաթօրլարընտան միւրէքէպ պիր ինկիլիզ տօնանմասընըն Բիրէսայա եթթիշմիշ օլտըլը վէ գօմանտանըն Եոնան գըրալընը զիյաւրէթ իթտիլի վիէննատան պիլտիրիլիօր։

Պիր ինկիլիզ նագլիյէ վաթօրըն պիր թապուր ասքէրլէ Մալթայա եթթիշտիլի վէ Ալէքսանտրիայա կիտէճէկի մէզքիւր աւտատան պիլտիրիլմիշ տիր։

—Վիէննատան պա թէլէկրաֆ իշար օլընիօր։ «Մըսըր մէսէլէսինտէն տօլայը պիր գաչ տէֆա վիւքէլա մէճիսի թօբլանտը։ Սուլթան իսթիլաֆըն հալլ ու թէսվիյէսինտէ էմր իթտիլաթիսի նագրըր Թէվֆիք բաչա ինկիլիզ էլիսի իլէ կէօրիւշտիւ։ Իշպու մէսէլէ իշիւն թիւրքիա պաչգա թարիլիք թուլթաճագ կէօրիւնիօր։»

Հէր նէ թարիլտէ թուլթա, ֆրանսա վէ Բուսիա ինկիլիթէրանըն թալէպիլէն գուվլէթ վէրմէքտէ օլտըլարընտան, հէր հալտէ թիւրքիա իթաաթ իթմէկէ մէճպուր օլաճաղընա ասլա շիւրհէ օլընամազ։

Պուլտան մատա, Շարգտա Բուսիանըն ինկիլթէրայա հէմէքքեար պուլընմասընըն չու իլք մօստուրասը տիկէր մէսէլէլէր իշիւն տալի էրմէնիստան վէ Մաքէթոնիա էհալիսինէ կիւզէլ իւմիտէր պալիլիտէյօր։ Եանի ինկիլիզ վէ Բուս տէվլէթլէրի պէյանիտէ թիւրքիա իշիւն մուխալիֆէթ գալգմըլ վէ իթիլաֆ հասըլ օլմայա պաշլամըլ օլտըլը անլաշըլիօր։ Շարգ մէսէլէսինտէ հալլ իթմէք իշիւն տէ պաշլըճա պու լաղըմ ըտը։

—Չարշամպա կիւնքի նօմէթօմըլտա՝ Պէտրիսանգատէ Ալի Շամիլին Թրապուլուտա քէնտիսի մուհաքէմէ իթմէք իշիւն կիթմիշ օլան նէճիպէտտին պէյի եարէլէմիշ օլտըլը մուլթասարէն եաղմըլ ըտըգ։ օլ խուսուտա Սօֆիա կաղէթալարը աթիտէքի թաֆիլաթը վէրիօրլար։

Սթանպուլտան կէչէնլէրտէ Թըրապուլուտա կէօնտէրիլէն ատիլ-

յէ հէյէթի Ալի Շամիլի իսթինթագ իթտիլի էսնատէ Շամիլ գուտուրմուլ պիր բէլէնկ կիպի ըէյիս նէճիպէտտին պէյին իւզէրինէ աթըլըր, անըն ըրթլաղընա սարըլըր վէ մաստա պուլընան գալէմթըրաշը գաթուպ նէճիպէտտին պէյի պօղաղլար։ Նէճիպէտտին գանլար իշինտէ ճան վէրիւ։

Էկէր սահիհ իսէ, էմսալը նամէսպուգ վէ բէք տէհէլէթի պիր մէնզարէ տըր։

Տ Ա Ւ Ն Ի Լ Ի

Պուկար վաթանբէրվէր վէ գահրամանը միւրալայ Եանքուլըն գաթըլը մաթթէթէսիւֆ թաստիգ օլընտը։

Ագրէպասը թարաֆընտան պու մաթէմի վէ բաղար կիւնիւ (Եարըն) միւթէվէֆա Եանքուլըն իսթիւրահաթը րուհի իշիւն, Սօֆիա քիլիսէլէրինտէ հոգեհանգիստ այնը Բուհանիսի իճրա օլընաճաղը իւն օլընտը։

Թէնէրալ Զօնչէվին էվլէլէքի կիւն Սօֆիա կաղէթալարընա վէրտիլի մալիւմաթա կէօրէ, Մանասթըր վիլայէթինտէ պիր քէօյ ճիվարընտա ապրիլ 3 տէ թիւրք ասքէրի իլէ պիր պուկար չէթասը վուրուլմուլ ըտը։ պու միւտարէպէտէ չէթատան Եալընըլ պիր շալս գուրթուլմուլ, տիկէրլէրի Եանքուլլէ պէրապէր (նահատակ) օլմուլլար։

Պուկար միլլէթինին պու զայպընտան տօլայը միւթէթէսիլիգ վէ մաթէմիլն իշթիւրաք իտէրիլ։

ԲՈՒՍԻԱ

Տուվանըն աղըլաճաղը միւնասիպէթլէ Բէթէրսպուրկուտ պէօյիլ թէլաշ վար տըր։ պիւթիւն քիլիսէլէրտէ տուլար օգուլտու մէքթէպլէր, պանգալար, պիւրօլար վէ հիւքիւմէթ տայիթէլէրի գաթանտըլար։ Չար վէ Չարիճա Բէթէրսպուլտան վաթօրլէ Բէթէրսպուրկա կիտէյօրլար։ Նէվա նէհրին վէ քէօրիւնին իւզէրինտէն կիտուպ կէլմէք մէնն օլընաճագ Չարըն Եթթիշէճէկի կիւն։

—Մէճիլիսի ալանա Չար թարաֆընտան նասպ օլընաճագ աղալարըն լիստասընտա վիթէնին վէ իսթիւրա վէ խասթա օլան էվէլէքի աղալարըն իսթիլէրի տալի տէյիլ տիր։ Ալանա ֆալարի բէյիս Կրանտիւք Միշէլ Նիքօլայէվիլ վէ ըէյիս Գօնթ Սօլքի նասպ օլընտըլար։

—Մ. Սթօլիւր տալիլիյէ, Մ. Գօկուլչէֆ մալիյէ նաղըրը վէ Բը-

րէնս Շիրինքին Սինթ Բրօգուրօրը նասպ օլընտըլար [մահուտ բօրէտօնօյչէվին Եէրինէ]։

—«Ֆիկարօ» կաղէթասընըն Սթանպուլտան ալտըլը մալիւմաթա կէօրէ՝ Սուլթան Համիտ աղըր սուրէթտէ խասթա ըմըլ պու իլլէթտէն պիր գարտաշը էօլմիւլ օլտըլը կիպի, չիտիտէ պիր գըլ գարտաշը էօլմիւլ հատտինտէ իմիշ։

ՍՈՆ ՀԱՎԱՏՈՒՄ

—Լօնտրա—Մօսկուտան պիլտիրիլիօր քի, իսթիլաճըլար ճէնուպի Բուսիանըն, պիւթիւն վալիլէրինէ էօլտիւրմէք իշիւն պիր պէօյիլ իթթիֆագ աթթիթմիշլէր։ բօլիսիա իլլի պուլմուլ։

—Գահրէտէն պիլտիրիլիթիլիլէ պինան, սինթըն միւնաղաւը մահէլլէրինէ թօբլար նագլ իշիւն տէվլէլէր քիւրալանվըլ։ Աղէքսանդրիայա ինկիլիզ ասքէրի Եթթիշմիշ։

—Սթանպուլ—Թիւրք վէ Պուկար սինթ մէսէլէսի հալլ օլընտը։

—Մուհարէպէ հաղըրըլը պիր արալըլ թէլէլիլ իտիլմիշ իտի, չիմտի Եինէ պաշլամըլ տըրմուհիմմաթ սաթըն ալընիօր, սիւվարի իշիւն 1000 պէկիր Բուսիատան ալընտը։

—«Օտիսիս» նամ ալման կէմիսինտէ «պէնզին» պուլընտըլը սէպէպլէ թիւրք հիւքիւմէթի թարաֆընտան զապթ իտիլտի, Ալման գօնսօլտը վէ էլիսի կէմիսին սէրպէսթ պըրազըլմասընը թալէպ իթտիլէր իսէտէ, հիւքիւմէթ գուլագ վէրմէտիլիտէն տէրհալ էլլի պիլզաթ՝ կէմիսահիպինի վէ ալման սթասիօնէրտէն պիր մըգտար ասքէր պէ-

րապէր Գալաղա կիտուպ, կէմիլ թիւրքլէրին էլլէինտէն ճէպրէն ալարագ տէբօյա կէօթիւրտիւ։ Էլլի կէրի կէլտիքտէն սօնրա՝ Սուլթանըն կէմիլ թէսլիլ իշիւն պիր իրատէսի անա թէպիլիլ օլտը։

—Լօնտրա 27 ապրիլ—Սթանպուլտան կէլէն պիր թէլէկրաֆ պիլտիրիլիօր քի, Մըսըր սինթընտա թապա նամ մէվգըտան թիւրք ասքէրինին չէքիլմէսինտէ Սուլթան րաղի օլմայօր։ Ագաւմ Եըլտըլտա ֆէվգէլատէ վիւքէլա մէճիսի թօբլանտը՝ Մըսըրտան Մուլթար բաչանըն կէօնտէրտիլի թէլէկրաֆ մէճիստէ օգուլտու։ մէրգուլ բաչա թիւրք սինթընտան ասքէրին չէքիլմէմէսինտի թալիլիլ իտէյօր, զիրա Խըտիլ թիւրքիանըն պիւթիւն թալէպլէրինի գապուլիտէր ըմըլ։

—Մօսկուա վալիսի Տուպագով կէչէն դեկտեմբեր ալընտա Մօսկուտաքի իսթիլալ վէ գըրկըն սէպէպի իլլ իսթիլաճըլար թարաֆընտան էօլիւմէ մահքիւմ իտիլմիշ օլտըլընտան՝ կէչէն կիւն անա գարշը պիր պօմպա աթըլտը։ Օլ պապտէ չու թաֆսիլաթ վէրիլիօր։ Վալի Տուպագով Եանվէրլէրի իլլ վէ ֆայթօնլէ քիլիսէտէն գօնաղընա կիտէր գօնաղը էօնիւնտէ ֆայթօնա պիր պօմպա աթըլըր վէ բէք տէհէլէթլի բաթլար Եանվէրի վէ պօմպայը աթան բարչա բարչա օլուրլար, ֆայթօնը վէ աթլար սաղ գալըրլար։ Տուպագով պօմպանըն թէթսիլիտէն պիր թարաֆա աթըլըր վէ պիր ալաղընտան Եարէլէնիլ գօնաղըն ճամլարը գըրըլըր, ֆայթօն բարչալա իւպ տաղըլըր վէ աթլար գաչարլար։»

Оговорки А. Курбетиянъ
всѣ приняты А. Тодоровъ и С.-не—Варна



OMEGA 8038

ԵԱԿՈՐ ԹՕՍԳՐԵԼԳԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգու, Ժընէվի եւ Պուլքէլի ցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարգեւներ ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամացոյցի գործարանը «ՕՄԵԳԱ» իրօք իր անունը արդարացուցած է իբր ճարտարարուեստը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԿԱ ին հասցնող հաստատութիւնը։

Այս հոշակաւոր Գործարանին ներկայացուցին է Տ. Յակոբ Թօսպըրգեանի վաճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԿԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, օսկեայ, արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ։ Գիները ՉԱՓԱՒՈՐ։

Կը գտնուին նաեւ Պուլքէլիոյ բոլոր կարեւոր անկախաճանքերու եւ ժամագործներու քով։